ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունիսի 2020 թվականի N 167

ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մանուկ Սիրեկանի Վարդանյանին և համասեփականատերեր Շուշանիկ Սիրեկանի Վարդանյանին , Անահիտ Մանուկի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2775543 վկայական) բնակարանի ՝ ք. Եղեգնաձոր, Անդրանիկի 17 բն. 16 հասցեն փոփոխել և տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Անդրանիկի փողոց, շենք 17 , բնակարան 16:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. հունիսի 29
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունիսի 2020 թվականի N 168

ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 44-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի, <<Ավտոմոբիլային տրանսպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի և Հասատանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել ավտոմոբիլային ներհամայնքային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնելու համար ձևավորված մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը.

1) Վարդան Ավագյան - համայնքի ղեկավարի տեղակալ
2) Արմեն Աղաջանյան - գլխավոր մասնագետ - գլխավոր ճարտարապետ
3) Սիրակ Թադևոսյան - համայնքի ղեկավարի օգնական
4) Խաչիկ Ասլանյան - Վայոց ձորի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ
5) Սամվել Ոսկանյան - ավագանու անդամ
6) Արմեն Սարգսյան - ՀՀ ՔՏՀԱՏՄ Վայոց ձորի տարածքային բաժնի պետ
7) Կարեն Ամարյան - ՀՀ ոստիկանության ՃՈ Վայքի հաշվառման-քննական խմբի տեսուչ, ոստիկանության մայոր

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2020թ. հունիսի 29
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ.

29 հունիսի 2020 թվականի N 169

ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ԿԱՅԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՆԳԱՌԻ ՎԱՅՐԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետերի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել զբոսաշրջիկների տրանսպորտային փոխադրամիջոցների համար հատուկ կայանման և կանգառի հետևյալ վայրերը.

1) Նարեկացու փողոց՝ <<Արագիլ>> կինոթատրոնի դիմաց

2) Միկոյան փողոց՝ ավտոկայանին կից տարածք

3) Վ. Գևորգյան փողոց՝ Մոմիկի զբոսայգուն կից տարածք

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. հունիսի 29
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հուլիսի 2020 թվականի N 170

ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՀԱՏՎԱԾԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 1730-Ն որոշումները, ինչպես նաև հիմք ընդունելով ավագանու 27.12.2019թ-ի թիվ 98-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ««Եղեգնաձորի «Գլաձոր» հյուրանոց» բաց բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1373339 վկայական/ համայնք Եղեգնաձոր ք., Նարեկացի փողոց թիվ 1 հասցեում գտնվող հյուրանոցի առանձնացվող 683.20 քմ մակերեսով հատվածին տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Եղեգնաձոր ք., Նարեկացի փողոց թիվ 1/1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. հուլիսի 02
ք.Եղեգնաձոր